Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(Թբիլիսի, 12 հունիսի, 2011 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Հոգի Աստուծոյ եւ խորհրդոյ, հոգի հեզութեան եւ զօրութեան,
հոգի իմաստութեան եւ գիտութեան, հոգի երկիւղի
աստուծպաշտութեան, աղաչեմք, շնորհեա եւ
մեզ ողորմութեամբ ի Քոց պարգեւացդ»:

(Շարական հոգեգալստեան)

Սիրելի հավատավոր զավակներ Մեր,

Գոհություն եւ փառք ենք վերառաքում առ Երկնավոր մեր Տերը, որ Մեզ բերկրալի առիթը շնորհեց ի Քրիստոս սիրեցյալ մեր հոգեւոր եղբոր՝ Իլյա Բ Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարքի հրավերով եւ Հովվապետական այցելությամբ լինելու Վրասպանում ու հանդիպելու ձեզ հետ: Մեր հոգին լի է ուրախությամբ ու խնդությամբ, քանզի Մեր սիրելի հավատավոր զավակներիդ հետ համախումբ ենք այսօր, եւ մեզ հետ են մեզ աղոթակից Վրաց Ուղղափառ Եկեղեցու մեր հոգեւոր եղբայրները եւ Թբիլիսիի ու Երեւանի հարգարժան քաղաքապետները: Ողջունում ենք այստեղ ներկայությունը նաեւ ՀՀ մեծահարգ դեսպանի:

Հոգեգալստյան շնորհառատ այս օրը շարականագրի բառերով հայցում ենք Սուրբ Հոգու շնորհները աշխարհին, համայն մեր ժողովրդին: Հավատքով է բացվում աղբյուրը Սուրբ Հոգու բյուր շնորհների, որոնք զարդարում են հոգիները հավատացյալների, լուսավորում իմաստությամբ, զորացնում քաջալերությամբ, հոգու խաղաղությամբ եւ ուրախությամբ: Սուրբ Հոգին Տիրոջ մկրտության ժամանակ աղավնակերպ երեւաց՝ որպես բյուր շնորհներով խաղաղություն տարածող, եւ Հոգեգալստյան օրը հրե լեզուների տեսքով իջավ առաքյալների վրա: Կրակի մաքրող զորության նմանությամբ Աստծո Հոգին սրբագործում է հավատացյալներին, ամրապնդում հավատքը, ոգու արիությունն ու կամքը: Դարեր շարունակ առ Աստված հավատքը Սուրբ Հոգու շնորհներով ուժ է տվել մեր ժողովրդին՝ դիմակայելու ժամանակների փորձություններին ու դժվարություններին եւ անսասան պահելու բարեպաշտ հոգու զորությունն ու հոգեւոր ուրախությունը, ինչպես առաքյալն է ասում՝ «Ընդունեցիք Խոսքը բազում նեղության մեջ Սուրբ Հոգու ուրախությամբ» (Ա Թեսաղ. Ա 6):

Սիրելիներ, Հոգեգալստյան օրը Վերնատանը առաքյալները միասիրտ ու միաբան էին: Գովելի միաբանությունը եւս արժանի է դարձնում աստվածային շնորհների: Մեր կյանքում Աստծո Սուրբ Հոգու պարգեւներով է նաեւ, որ մեր ժողովուրդը միաբանվում է մեկմեկու օգնելու ու զորակցելու, որի վկայությունը նաեւ նորոգված այս եկեղեցին է՝ ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի բարեպաշտ հայորդիների համախումբ աջակցությամբ: Սուրբ Էջմիածին եկեղեցին այսօր վերաօծվեց Հայրապետ եւ հոտ մեր միասնական աղոթասացությամբ եւ այսուհետ օրհնություն է բաշխելու հավատացյալներին ու Վրաց երկրին: Արդարեւ, Սուրբ

Հոգին ներկա է մեր մեջ մեր ամեն բարի, ճշմարիտ ու արդար գործերի հետ, հավատավոր մեր ընթացքներում, մեր միասնական աղոթքներում:

Հոգեւորոգ այս պահին մեր մտածումները վերստին ուղղվում են դեպի մեզ բոլորիս հարազատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որտեղից շողում է Հայաստանը դեպի Աստված դարձրած լույսը, եւ սկիզբ են առնում մեր ժողովրդի հավատքը, քրիստոնեական կյանքի ուղին եւ սրբազան արժեքները: Այս արժեքներով սնված եւ էջմիածնադրոշմ հավատքով զորացած հավատավոր մեր հայրերը երկու դար առաջ կառուցեցին այս գեղեցիկ եկեղեցին եւ անվանեցին Սուրբ Էջմիածին, համոզումով, որ Սուրբ Էջմիածնի աստվածային անսպառելի լույսն է բաշխվում նվիրական այս աղոթավայրում:

Երկու դար Սուրբ Էջմիածինը՝ գտնվելով հայաշատ Հավլաբար թաղամասում, իր խնկաբույր կամարների ներքո է համախմբել Վիրահայոց թեմի հավատավոր հայորդիներին, ովքեր աղոթքը իրենց շուրթերին եւ հայրենական հիշատակները հոգիներում՝ վրաց հողի վրա ապրել են խաղաղ ու ստեղծագործ ընթացքով եւ կազմակերպել ու խնամել իրենց համայնքային կյանքը: Ահավասիկ, Մեր հայրերի արդար աղոթքով ու քրտինքով շաղախված եկեղեցու օրհնությունը ուժ է տալիս եւ զորացնում մեզ մեր հավատքի մեջ՝ ջանք ու նվիրում բերելու եւ շեն ու պայծառ պահելու եկեղեցական եւ ազգային կյանքը, վերականգնելու խոնարհյալ մեր սրբավայրերը: Վիրահայոց թեմում խնդիրներ ունենք հայկական եկեղեցիները թեմին վերադարձնելու, մեր հայրենի ժառանգությունը խնամյալ պահպանելու, թեմին իրավաբանական կարգավիճակ շնորհելու հետ կապված: Հավատում ենք, որ եղբայրական սիրո ու զորակցության այն ոգով, որոնք դարերով նվիրագործել են բարի հարաբերությունները ու բարեկամությունը մեր երկրների ու հավատակից ժողովուրդների, այս խնդիրները իրենց ցանկալի լուծումը պիտի գտնեն:

Սիրելի զավակներ Մեր, Վիրահայոց թեմը միշտ գտնվում է Մեր ուշադրության կենտրոնում եւ Մեր աղոթքներում: Այսօր գոհունակություն է Մեզ համար անդրադառնալ, որ մարտահրավերների ու խնդիրների առկայության պայմաններում նաեւ հաջողություններ են արձանագրվել Վիրահայոց Տիրախնամ թեմում: Հայրապետական Մեր պատգամն է ձեզ, որ ապրեք հավատքով, զորանաք Սուրբ Հոգու շնորհներով, որոնք ոռոգում ու նորոգում են հոգիները, քանզի «Հոգին օգնության է հասնում մեր տկարություններին,... բարեխոս է լինում մեզ անմռունչ հառաչանքով» (Հռոմ. Ը 26): Ձեր եւ մեր բոլոր զավակների հոգեւոր ուժով, քրիստոնեական ճանաչողությամբ, ավետարանական պատգամներին հավատարմությամբ միշտ հաստատուն ու պայծառ պիտի լինի Մեր Եկեղեցին: Շարունակելով վիրահայոց հարուստ ավանդները, Վիրահայոց թեմի ձեր բարեխնամ առաջնորդ Սրբազանի ու բոլոր եկեղեցականների հետ միասնաբար պայծառացրեք հոգեւոր եւ ազգային ձեր կյանքը, խնամեք ու պահպանեք հայոց լեզուն, մեր մշակույթն ու հայրենական արժեքները: Մենք լիահույս ենք, որ թեմի հոգեւորականաց նվիրյալ ծառայությամբ, վիրահայ համայնքի արդյունավոր գործունեությամբ եւ Աստծո բարեխնամ կամքով պիտի հաղթահարվեն բոլոր դժվարությունները, որոնք ծառացած են թեմի առջեւ:

Սիրելի զավակներ Մեր, Վիրահայոց դարավոր թեմի նոր զարթոնքի հույսն ու ձգտումն ունեք դուք եւ ձեր ջանքերն եք ներդնում այս ուղղությամբ: Հայրապետիս համար մեծ ուրախություն է տեսնել ձեր նախանձախնդրությունը ազգային կյանքի հանդեպ, ձեր

հավատարմությունը մեր Եկեղեցուն ու աստվածահիմն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Վերանորոգված այս սուրբ եկեղեցին հոգու ձեր աչքերը մշտապես պետք է ուղղի դեպի Մայր Հայրենիք եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Յուրաքանչյուր հայ Սուրբ Էջմիածնի հանդեպ դրսեւորվող իր նվիրումով է արժեւորում առ Աստված իր հավատքը, հավատարմությունը՝ քրիստոնյա-ազգային ինքնությանը եւ սերը՝ հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Դուք ձեր հայրերի արժանի հետնորդներն եք եւ այսօրվա պայծառության կերտողները վիրահայ համայնքի, որը ձեր եկեղեցասիրությամբ եւ հայրենասիրությամբ պիտի փայլի եւ հարատեւի:

Այս առիթով Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ձեզ ամենքիդ, եկեղեցու նորոգության գործին մեծ աջակցություն բերած ամերիկահայ մեր զավակներին, «Հայաստան համահայկական հիմնադրամին», որը նույնպես կարեւոր նպաստ բերեց եկեղեցու վերանորոգության աշխատանքներին:

Թող Աստծո Սուրբ Հոգին միշտ առաջնորդի ձեզ եւ պահպանի անսայթաք: Թող Ամենախնամ Աստված խաղաղության մեջ անխռով պահի Վրաստանն ու Հայաստանը, Վիրահայոց թեմը եւ անսասան պահի հավատավոր մեր զավակներին եկեղեցասիրության ու ազգասիրության մեջ ու պարգեւի օրհնյալ կյանքի բազում տարիներ՝ ի փառս Իր Սուրբ Անվան եւ ի պայծառություն Առաքելական Եկեղեցու:

«Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սերը եւ Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ հետ լինեն» (Բ Կորնթ. ԺԳ 13). Ամէն: